



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

5680

323  
u-28

1909

2010



457

11/1

V

ԱՆԱՐԱՏ ՅԴՈՒԹԵԱՆ

ԵՂԲԱՑՐՈՒԹԻՒՆ

323  
4-28

Ա ե զ

ԹԱԳԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

քարոզեցուք

Հ Ա Պ Հ Ե Լ Ե Ա Խ Ա  
Հ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ Ա Ր

Քրիստոս:

Ա. Կորնել. Ա. 25

ԱՐՏԻՆ ՅԻՍՈՒԽԱ

Մեր որոշն բռվանդակ եռան-  
դովք կը փափաքիք, որ Յիսուսի  
ամենաառարք ԱՐՏԻՆ Տշմարիտ Հեր-  
մեռանգութիւնն ընդ ամենայն աշ-  
խարհ ծառակեալ տարածի իւր  
փրկաւէտ զօրութեամբն:

ԼԵՒՈՒ ԺԴԻ

Հ Ա Ր Ա Վ Ա Ր

Ա շ խ ա տ ա ս ի ր ո ւ թ ի ս ե ր

26.

Գ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1902.

ԳԻՒՎԱՀ. ա.

Ա Զ Դ

Առաջիկայ զրուածքս, Յիսուսի Սրախն Ա-  
ռաքեալ՝ Երանելի Մարգարիտա-Մարիամ Ալա-  
գօդի գրութիւններէն բաղեալ կարճառու տնտու-  
թիւն մըն է Ս. Սրախն չերմեռամդութեան վրայ,  
որ եթէ այս ողորմած Սրտին նոր բարեկամներ  
կարենայ շահիլ Թարգմանիչն առատապէն վար-  
ձատորուած կը համարի զանօն։ Սոյն չերմեռան-  
դութեան վնրաբերեալ քանի մը ներութիւն  
ունեցող աղօթքներ աւելցուցինք վնրչն, զորոնք  
Beringerի Ներողութեանց Ս. Ժողովոյն կողմանէ  
վաւերացեալ գրքէն առած ենք հաւատարիմ  
Թարգմանութեամք։

Ըսթեղոցովն չերմապէս կը յանձնենք սոյն  
սիւթին վրայ զրուած ըսդարձակ զաղդիերէն  
գիրքն՝ Le Règne du Coeur de Jésus, 5 vol. (գինն  
է՝ ծամբու ծախորվ 8 ֆր. 10.-) կամ ասոր համա-  
ռուութիւնն մէկ հատորի մէջ՝ Le Coeur de Jésus.  
կը ծախուին՝ au Bureau du Sanctuaire de Mont-  
martre, Paris XVIII; rue de la Barre, 31.



12009

22000015





Ո՞վ քաղցրագութ Սիրտ իմոյ Յիսուսի,  
Տոր լինձ միշտ սիրել ըգմենդ աւելի:

## ՅԻՍՈՒՍԻ ՄՐՏՎԵԼՈՐՈՒԹԻՒՆԸ

### Ա.

Լեւոն ԺԳ. Ս. Քահանայապետին  
մէկ նշանաւոր գործն յամի 1899:  
Նոր Ղարարոն<sup>1</sup>:

Յամի 1899 գործ մը կատարուեցաւ, որ  
դժբախտաբար շատ քիչ ծանօթ է: Ո՞րն է  
այս գործու: Միթէ Ս. Քահանայապետին  
զաշխարհ Յիսուսի Քրիստոսի նուիրելն է:  
Ոչ: Թէեւ այս նուիրումն շատ ծանրակշեռ  
է, — որովհետեւ Եկեղեցին անկէ մեծամեծ  
պառկղներ ընդունիլ կը յուսայ, — սակայն  
այս բանս շարժառիթ միայն եղաւ իրական  
արտաքյ կարգի գործի մը: այն, այնպէս կա-  
րեւոր գործի մը, որուն նմանը գտնելու հա-  
մար Եկեղեցւոյ պատմութեան մէջ՝ հարկ է  
ելլել մինչեւ կոստանդիանոս: Նշանաւոր

<sup>1</sup> Լաբարուն կը կոչուի Մեծին Կոստանդիանոսի խա-  
շանշան գրու:

դէպքս է, որ Լեւոն ԺԳ. Ս. Քահանայապետն իբրեւ փոխանորդ եւ յանուն իսկ Յիսուսի Քրիստոսի Հանդիսավիշ ընդունեցաւ եւ Հռչակեց Ս. Արտին Ձերմեռանդութիւնն, եւ ասով (in hoc) պաշտօնապէս նոր զօշ մը տուաւ Եկեղեցւոյ:

Մայիսի 25ի Annunt sacramentum natusm  
Ծրջաբերական թղթին մէջ Լեւոն ԺԳ. կը յիշատակէ նախ այն հրաշալի տեսիլն, երբ Տէրն մեր Յիսուս Քրիստոս յամի 312 յանձնն կոստանդիանոսի տուաւ Եկեղեցւոյ զյահն իբրեւ նշան միութեան եւ յաղթութեան, ըսելով թէ Այսու նշանաւ յաղթեցես (in hoc signo vinces), — եւ յետոյ կը նկարագրէ այժմու ժամանակիս մէջ Եկեղեցւոյ դէմ ուղղուած չարարուեստ դաշնակցութիւնն, զոր կազմած են պէսպէս կողմնակցութիւնք եւ աղանդաւորք: Ասոնք թէեւ իրարու ճիշդ հակառակ նպատակներ ունին, սակայն բոլորովին միաբան են գ.Քրիստոս ատելու մէջ, եւ քստմեկիլ համաձայնութեամբ գողցես կ'ըսեն աստուածային Փրկչին, թէ Ոչ կամիմք թագաւորել զմա ի վերայ մեր. Զենք ուզեր որ գուն մարդկան վրայ թագաւորես: Ասոր հակառակ, Յիսուսի Քրիստոսի փոխանորդն՝ անսխալ վարդապետի ճոխութեամբ կ'արտասանէ յաջորդ սքանչելի եւ յաւալից իսոս-

քերն, զորոնք սոկի տառերով գրաշմուած տեսնել կը բաղձանք ամէն Եկեղեցեաց մէջ.

ԱՅԱԼԱՍԻԿ Այսօր կ'ընծայրի մեր աշաց փըրկութեան նոր նշան մը, որ բոլորովին ասուուածային է եւ վերջին աստիճանի յուսատու: Այս նշանն է Յիսուսի ամենաստւրը Սիրտն, որի վերուստ խաչ մ'ունի եւ բոցերու մէջ պայծառ եւ հրավար կը շողայ. Անոր վրայ պէտք ենք զնեւ մեր բոլոր յոյնն, եւ իրմէ պէտք ենք ննդինել եւ սպասել մարդկան փրկութիւնը::

Երկու դարէն աւելի է, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս անձամբ ծանուցած էր նոյն բանն երանելի Մարդարիտա-Մարեմայ ի Փարէ-լը-Մօնիկալ: Օր մը Յիսուս ցուցուց իւրեն Ս. Արտի պատկեր մը, որ նման է Լեւոն ԺԳ. Քահանայապետին նկարագրածին, եւ ըստ. «Ահա անե՛ երկրորդ միջնորդն: Իմ աստուածային Արտիս Ձերմեռանդութիւնն՝ սիրոյս վերջնն ճիգն է, որ այս վերջնն գարեւուս մէջ կ'ուզէ ձեռնտու եւ օդնական ըլլալ քրիստոնէից, իրենց առջեւ գնելով միանգամայն առարկայ եւ միջոց մը, որ կարող է շարժել իրենց սիրալ զիս սիրելու, եւ հաստատն սիրով սիրելու: Իմ աստուածային Արտիս պիտի թագաւորեմ: Այն, ես պիտի թագաւորեմ ընդդէմ սատանայի եւ անոր անհամար արդելքներուն. իսկ սատանան

իւր արբանեակներսիլ հանդերձ ամօթահար պիտի մնայ:

Փարէի խոնարհ կուսանն Յիսուսի առջեւ գնելով ամէն գժուարութիւններն, որոնք իւր Ա. Սրտին տէրութեանը կը դիմադրէին, հարցուց վատահութեամբ, «Փրկիչ իմ սիրելի, Ե՞րբ պիտի դայ այն երջանիկ ժամանակն.» Եւ յաջորդ միսիթարական պատասխանն ընդունեցաւ.

Կը հաւատան արդեօք թէ կարող եմ զայն ի գլուխ հանել: Եթէ կը հաւատաս, ապաքէն կը տեսնեն իմ Սրտիս զօրութիւնն սիրոյս մեծաշուշը փառաւորութեան մէջ: Երկինք եւ երկիր պիտի անցնին, սակայն իմ խօսքերս առանց արդինքի պիտի չմնան: Բնաւ մի վախնար, Ես պիտի թագաւորեմ ընդդէմ սատանայի եւ իւր արբանեկաց. Եւ պիտի անցնին անհետանան անոնք՝ որոնք իմ թագաւորելուս կը հակառակին:

Այս քաջալերիչ խօսքերս խօսեցաւ Տէրն մեր Մարգարիտա - Մարեմայ իբր 1689ին: Թէեւ Եկեղեցին այս սատուածային հրաւերիս վաւերականութիւնը կ'ընդունի, բայց ի՞նչ պատճառի համար՝ երկու գարեն աւելի սպասելին ետեւ՝ հրատարակեց զայն պաշտօնապէս: Այդ՝ գալանիք մըն է աստուածային Կաթոլիկութեան: Միանդամայն

կընանք ըսել, թէ մարդիկ ըստ բաւականի պատրաստուած չէին այդպիսի արտաքյ կարգի հրաւեր մ'ընդունելու: Գիտենք, թէ Փարէի յայտնութիւններէն ի վեր 16 Քահանայապետք՝ որ յաջորդաբար բազմեցան սրբոյն Պէտրոսի Ամժունին վրայ, մեծ սիրով պատասխանեցին պէտուական հարցուածոյ ի մասսին Ա. Սրտին Ներմեռանդութեան, սակայն անոնցմէ եւ ոչ մին վճռական խօսք մ'արտասանեց: Արդ՝ Լեւոն ԺԳ. Քահանայապետն ուստի զդդեալ այս վճռական խօսքս խօսեցաւ Եկեղեցւոյ մէջ, եւ այն՝ 22 տարի Քահանայապետութիւն ընելին ետեւ:

Ատոր պատասխանը կ'ընդունինք նոյն իսկ Լեւոն ԺԳ. Քահանայապետէն, որ այս նշանաւոր գործս ի գլուխ հանելին ետեւ՝ ըստ Եպիսկոպոսի մը. «Աշխարհըս Յիսուսի Ա. Սրտին նուիրելու համար՝ ներքին գերբնական գործում մը զգացի, որուն չկըցայ գէմ գնել: Աստուածային յայտնութեամբ գիտեմ, որ այս գործուղութիւնս պիտի ըլլայ սկիզբն մեծամեծ ողորմութեանց, որոնց յուսալից կը սպասենք»:

Այդ յայտնութեան պատմութիւնը հրատակելու ժամին եկած չէ տակաւին:

Բ.

Նոր Խաչակրութիւնը:

Ի՞նչ եղանակաւ պէտք են պարագանել  
էջ-ան ժամ-էրին: — Երբ Քլէրմնի ժո-  
ղվարին մէջ Ուրբանոս Բ. Խաչի դրօշը  
բարձրացուց սուրբ Երկրին աղասութեան  
համար, բաելով՝ Երթանը յօրուսադէմ, Աս-  
տուած այդպէս կ'ուզէ: իւր ձայնը բովանդակ  
քրիստոնէութեան մէջ արձագանդ գտաւ:  
— Նոր Խաչակրութեան առաքելոցն Լեռն  
ԺԳ. ի հրաւերին պատասխանելու համար,  
պէտք ենք ամէնքս, թէ քահանայք թէ  
հաւատացեալք, նոր Լաբարոնին շուրջը շա-  
րուիլ եւ ամէն տեղ հնէցընել փրկութեան  
աղաղակն թէ Երթանը առ Ս. Սիրոն:

Երեսող տատանող մարդկութիւնը փրկել  
եւ Եկեղեցւոյ ցաւերը փարատել բաղձացող  
անձինք՝ կը վնատեն միջոցներ վերական-  
գնելու հասարակութիւնն որուն մէջ կրօնա-  
կան զգածումն կը պակսի: Տարակոյս չկայ որ  
ասոնք գովիլի ճիգեր են եւ կրնան գոնէ  
դանդաղեցընել խորասուզող շարժումն որ  
զաշխարհ կը մղէ կը տանի ընդհանուր սւրա-  
ցութեան եւ անկանգնելի կործանման: Առ-  
կայն Ս. Քահանայապետին, մանաւանդ թէ  
նոյն ինքն Յիսուսի Քրիստոսի ճոխութեան

վրայ յենլով՝ չենք վարանիր ըսելու, թէ այս  
մասնական ճիգերն անզօր պիտի մնան, քանի  
որ ընդհանուր չեն եւ անոնց կենդրանը Յի-  
սուսի Սիրաբ չէ: Երբ ահաւոր թշնամի մը կը  
սպառնայ որեւէցէ Երկրի, հարկ է որ բոլոր  
քաղաքացիք սպառազնին, որպէս զի կարո-  
ղանան թշնամոյն դիմագրել: — Օ՞ն, գուք  
ամէնքդ, որ անկեղծութեամբ կը սիրեք զիե-  
սուս Քրիստոս եւ իւր Եկեղեցին, արթնցէք,  
նոք Ելէք: Յիսուսի Ս. Սիրոն այդպէս կ'ուզէ:  
եւ իւր դրօշին տակ կը հրաւերէ զամէնքն առ-  
հասարակ:

Ի՞նչ է Երպարվ կարել է զինաւորէլ Ս. Սրբն  
Խուլակիւութեան: — Կը պատասխանէ մեղի Ե-  
րանելին Մարգարիտա-Մարիամ, թէ “Պէտք  
էք ձեր անձն ամբողջովին նուրիել այս պաշ-  
տելի Սրտին, որպէս զի կարենաք թէ անձամբ  
մատուցանել, թէ վաստկիլ իրեն ամէն սէր,  
պատիւ եւ փառք, զոր կրնաք ի գործ գնել,  
թէ դուք անձամբ եւ թէ ձեր իշխանութեան  
հպատակող անձանց ձեռօք: Բնաւ մի վախ-  
նաք ձեր ժամանակն այդպիսի գերազայն  
վախճանի մը վատնելու, որովհետեւ նոյն իսկ  
ինքն է մեծատուն Տէրն, որ ձեզի վարձա-  
հասոյց կ'ըլլայ:

Ո՞ր է նոր Խուլակաց բնաբանն: — Երանելի  
Մարգարիտա մեր առջեւը կը ծրագրէ զայն

այդպէս. “Յիսուսի Սիրալ կ'ուզէ թագաւոր  
ըել ամէն սրտերու վրայ, ընտանեաց մէջ,  
բոլոր ազգաց վրայ եւ Եկեղեցւոյ մէջ. եւ այս  
թագաւորութիւնն հաստատելու համար՝ կը  
ինդրէ գործակից օքնականներ” : Հարցընենք  
Երանելոյն. Յորում կը կայանայ իւրաքան-  
չեւր անձի պաշտօնն, ընտանեկան պաշտօնն,  
ընկերական պաշտօնն եւ Եկեղեցական պաշ-  
տօնն, զօր պէտք ենք ընծայել Յիսուսի  
Սրտին: Ասոնց նկատմամբ յաջորդ գլուխնե-  
րու մէջ Երանելոյն տալու գտակերուն մեր  
միակ պատասխանն ըլլալու է, թէ նս ալ կ'ու-  
զնմ Խաչակիր, այսինքն է՝ Ս. Սրտին առա-  
քեալն ըլլալ:

Գ.

Ս. Սիրտը սրտերու վրայ թագաւո-  
րել կ'ուզէ:

Ա. Արտէ Հերմենուդունի նոդադախն սրն է:  
— Երանելի Մ. Մարիամ կը պատասխանէ.  
“Ս. Սրտի Հերմենուդութեան գլխաւոր նպա-  
տակն է՝ շահիլ հոգիներն ի սէր աստուա-  
ծային Սրտին, այնպէս որ ինք միայն տիրէ  
մեր սրտերուն վրայ, եւ իւր սիրոյն փօխարէն՝  
մենք ալ սէր հաստուցանենք իրեն” : Յիսուս  
հեղ մ'ըսաւ իրեն, “Ծարաւի եմ, եւ կ'այ-  
րիմ կը տոչորիմ սիրուելու բաղձանքէն” :

Ա. Սիրտը հշմարդապէս սէրելու համար ի՞նչ  
պէտք է ընել: — Ո՛չ, որչափ մեծ են այս աս-  
տուածային Սրտին պահանջումները. “Միտ  
գիր, կը գրէ Աստուածոյ աղախինն, թէ այս  
պաշտէլի Սիրան Բ'նչ կը ինդրէ իւր բարե-  
կամներէն. ի՞նք կ'ուզէ գիտաւորութեան  
մաքրութիւն, գործոց մէջ խոնարհութիւն  
եւ ինդրուածոց մէջ համակամութիւն” :  
Մէկ խօսքով՝ այս աստուածային սէրն է ան-  
հաշտ թշնամի երեք ցանկութեանց, որ են  
սէր հեշտութեանց, սէր հարստութեանց եւ  
ամբարտանութիւն: Այս սէրը կ'ուզէ իրեն  
ուղեկից ունենալ ամէն առաքինութիւններն,  
որոնցմէ երեսուն երեք հաս յառաջ կը բերէ  
Երանելին, եւ կը յաւելու, թէ

“Յիսուս զլաւորալեար կը պահանջէ մեղ-  
մէ, որ երբեք գիտութեամբ պակասութիւն  
չգործենք: Աւստի, ոչ միայն մեղքէ պէտք  
ենք զգուշանալ, այլ նաև ամենադպյան կա-  
մաւոր թերութիւններէ, որոնք կրնան մեր  
սրտին մաքրութիւնն աղտեղել: Ս. Սիրալ  
բաժանեալ սիրտ շընդունիր, այլ կամ ամ-  
բողջովին կ'ուզէ եւ կամ ոչ բնաւ” :

Այս սէրը հործորդունիւն լուս դժուարէն  
է որդեօք: — Թէպէտ եւ ամենաբարձր կա-  
տարելութեան գերագոյն պարագերը կը պա-  
րունակէ իւր մէջը, սակայն եւ այնպէս գիւ-

բին եւ պարզ է: Երբ Երանելին կը վախնար որ Յիսուսի այս պահանջումն անհնարին է գործադրել, Տէրն մեր ըստ իրեն. “Ի՞նչո՞ւ կը վախնաս: Աշխատէ զիս միայն սիրելու, այսու ամէն բան կատարած կ'ըլլաս: Իմ սէրս ամէն բանի տեղը կը բռնէ:” Դժուարին է արդեօք ըսել. Սիրտ Յիսուսի, կը սիրեմ դքեզ. Քու սիրոյդ համար պիտի գգուշանամ մեղքէ. Բոլը գործքերս քու սիրոյդ համար կ'ուզեմ ընել՝ ամէն զօհողութիւն յանձն առնլով: — Յիսուսի սէրն ոյժ մըն է, որուն ոչնինչ եւ ոչ կը կնայ դէմ դնել:

Մէնէ այս սէրս պատրաշալնէլ ու ըսրւուն էլ կը ուսորնէլ վարդ: — Երանելին կը պատասխանէ. “Մաիր այս գորովալից Սրտին մէջ, որ նման է ապահով նաևու մը, որուն զեկավարն է սէրը, եւ աշխարհքիս մըրկալից ծովուն մէջ անվկանդ կ'առաջնորդէ քեզի: Միայն թէ այդպիսի կարեւոր ճամբրդութեան ատեն, պէտք չէ նաւ մանել առանց պատերազմի գէնք ունենալու. այսպիսի միրոյ ճամբաներն մեր տկարքնութեան համար շատ նեղացուցիչ են, բայց պէտք է այս պատուածային Սիրտը սիրել, թէեւ մեծամեծ զօհեր արժէ մեղի:”

Պ.

Ս. Սիրտը կ'ուզէ թագաւորել ընտանեաց մէջ:

Ի՞նչ միջներով կարելէ և Ս. Սրտին դաշտուն մոշենել ընտանեաց մէջ: — Երանելի Մ. Մարիամ գլխաւորաբար երկու միջոց կուտայ. 1. Աստուածային Սրտին վրայ խօսող զրուածոց ընթերցումը. մամուլն ալ՝ որ աշխարհքիս վրայ այնչափ չարիք կը գործէ՝ հարկ է որ գործակից ըլլայ Ս. Սրտին թագաւորութիւնը տարածելու: 2. Ս. Սրտի պատկերին պաշտօնը:

Ի՞նչ Գծաւոն+ պէտ+ են+ ընել Ս. Սրտէ պատկերին:

1. Տնական մեծարանը: — Երանելին կ'ըսէ, թէ Ս. Սիրտը կ'ուզէ, որ այս պատկերս աներու մէջ գրուի եւ մեծարուի, որպէս զի մարդիկներուն անդպայ սիրալ շարժէ: Այս գորովալից Սիրտն, որ ամենայն օրհնութեանց աղքիւրն է, առատութեամբ պիտի սփռէ իւր օրհնութիւնն այն տեղերն, ուր իւր պատկերը գրուած է եւ կը մեծարուի:”

Ուրեմն ամէն ընտանիք պէտք է 1. ունենայ տեսակ մը տնական աղօթարան, ուր Ս. Սրտին պատկերը զետեղուած ըլլայ նոյն ընտանեաց պաշտպաններուն քովլ. 2. ըն-

տանեաց ամէն անդամք գոնէ ամէն իրիկուն  
քովէ քովլ պէտք են դալ՝ ի միասին ազո-  
թել ու Յիսուսի Սրբին նուիրուիլ, եւ գոնէ  
ամսոյն առաջին ուրբաթն աստուածային  
Սրբին Լիթանիան ըսել:

2. Առանձնական միջարանց: — Երանելին  
կը յաւելու, թէ “Ս. Սիրտը կ'ուզէ, որ պղոփէկ  
պատկերներ պատրաստուին, որպէս զի մեծա-  
րել փափաքողք՝ կարենան վրանին կրել  
զայն: Յիսուս կը խոստանայ գրոշմել իւր  
մէրն այն սրտերուն վրայ, որոնք այս պատ-  
կերս վրանին կը կրեն, եւ իր սիրոյն հակա-  
ռակող ամէն զդացումէ կը զդուշանան եւ  
զայն անհետ կ'ընեն:”

Ս. Քահանայապետն Լեւոն ԺԳ. 1900.  
Ապրիլ 4ին՝ Ս. Սրբին յատուկ Հանդերձն  
Հաստատեց եւ շատ մը ներողութիւններով  
Ճիսացուց: Այս Հանդերձն ճերմակ գունով  
է, որուն մէկ կողմը Ս. Սրբին պատկերն եւ  
միւս կողմը Ս. Կուսին Մարեմայ՝ սղորմու-  
թեան մօր պատկերը կայ: Այս Հանդերձն  
օրհնելու եւ ուրիշներուն տալու իշխանու-  
թիւնը կրնայ ամէն քահանայ խնդրել եւ  
ընդունիլ ընդհանրական Մեծաւորէն նուի-  
րները Մարեմայ կոչուած կրօնաւորաց (իւր  
հասցէն է՝ T.R.P. Supérieur général des  
Oblats de Marie. Rue Saint-Péters-

bourg, 26. Paris.): Կարելի է նաև գիմել  
Մանարթրի Ս. Սրբին եկեղեցւոյն Մեծաւո-  
րին (R.P. Supérieur des Chapelains du  
Sacré-Cœur. Rue de la Barre, 31. Paris-  
Montmartre): Սոյն անձէն կրնայ խնդրուիլ  
անեւ: Le Scapulaire du Sacré-Cœur  
անուն տետրակին, որուն մէջ այս Հանդերձիս  
վերաբերեալ կարեւոր տեղեկութիւններ կան  
(Գլու 10 սանդիւ):

Ե.


Ս. Սիրտը կ'ուզէ թագաւորել մարդ-  
կային ընկերութեան վրայ :

Արժան եւ Յիսուսի Սրբին ընկերուին նա-  
խուարութեան էլեւագ պայմաններն: — Երա-  
նելի Մարգարիտան կը գրէ. “Այս գորովա-  
լից Սիրան ինձի յայտնեց, որ ուրիշ մեծա-  
մեծ ծրագիրներ ալ ունի.

“1. Կ'ուզէ շքով եւ փառօք մանել իշ-  
խանայ եւ թագաւորաց պալատներուն մէջ:

“2. Կ'ուզէ իւր մէրութիւնը հաստատել  
աշխարհիս մեծամեծներուն սրտին մէջ:

“3. Կ'ուզէ որ այս ջերմեռանդութիւն  
մեծամեծաց պալատներուն մէջ արածուի,  
հոն այնչափ աւելի մասն գույնութիւն ունի:



ՀԱՅՈՒԹ ԱՐԴՅՈՒՆ

լու համար, որչափ որ իւր չարչարանաց տեսն իշխանաց եւ թագաւորաց պալատներուն մէջ նախատուեցաւ եւ անարգուեցաւ:

“4. Ամէն մէկ աղդէն կը ինդրէ. Ա. Որ եկեղեցի մը կառուցանէ, որը այս աստուածային Սրտին պատկերը դրուի. Բ. Այս երկրպագելի Սիրաը կ'ուզէ որ հօն թագաւորն եւ բոլոր արքունիքն իրեն նուիրուին. Գ. Կ'ուզէ գրօշներու վրայ նկարուիլ:

“Այս ամէնը շատ գժուարին կ'երեւայ սատանային յարուցած մեծամեծ արգելքներուն պատճառաւ. որովհետեւ սասափի կը կատղի տեմնելով՝ որ Ս. Սրտին ցանկալի եւ փրկաւէտ ջերմեռանդութեան չնորհիւ՝ այնշափ անշափի հոգիներ իր իշխանութեան տակէն պիտի ելլեն աղատին, որոնք յառաջիւրն էին; Սպառնացած ալ է ամէն տեղ այս ջերմեռանդութեան դէմ արգելքներ յարուցանել: Պէտք ենք ուրեմն պատրաստ ըլլալ սատանային կատաղութեան դէմ քաջաբար կուռելու, առանց ընդուռաջ ելած հակառակութեանց վրայ զարմանալու: Այս փառաւոր ձեռնարկութեան մէջ՝ նեղութիւնը եւ հակառակութիւնը ամէնէն ապահով նշաններն են, թէ Ս. Սրտին թագաւորութիւնը պիտի հաստատուի”:

Ամէն հաւատողեալ էն ոչոք ընէ, որ է-

հայրենեաց մէջ Ս. Սրտին նախառորութեալ հաստատուի: — Ամէն քրիստոնեայ ջանալու է, որ Ա) իւր երկրին մէջ Ս. Սրտին նուիրեալ եկեղեցի մը կառուցանելու համար՝ ձեռքէն եկած օգնութիւնն ընէ: Բ) Հետամուտ ըլլայ, որ այս ջերմեռանդութիւնն ըստ կարելոյն ամէն տեղ ատրածուի, որպէս զի օր մը աղդովլն իրեն նուիրուելով՝ Յիսուսի Սիրտն այն աղդին վրայ թագաւորէ: Եցիւթէ մեր բոլոր Հայ աղդին մէջ ալ Ս. Սրտին ջերմեռանդութիւնը հռչակուի տարածուի, եւ անոր քաջոր թագաւորութեան օր հնութիւնները վայելենք: Եթէ ամէն մարդ իւր կարելքն ընէ, Յիսուսի քաղցրագութ Սիրտն մեր աշխատութիւնն յաջողութեամբ կը պասկէ:

### Զ.

Ս. Սիրտն կ'ուզէ եկեղեցական պաշտօն եւ իւր Տօնախմբութիւնն:

Որո՞ն+ են դիմուր պաշտամուն+, Արո՞ն+ Ս. Սիրտն Ելեովէն իւ ինդրէ: — Եր. Ս. Սարիամ չըս բան կը յանձնէ. Ա) Ս. Սրտին ախմբութիւնն. Բ) Ամոյն առաջին ուրամթն. Գ) Եղապրութիւններ եւ Դ) Ս. Սրտին նուիրեալ խորաններ: Ս. Քահանայապետն

Աւելն Ժ. Հինգեկարդ մ'ալ կը յանձնէ,  
որ Եւ Յունիս ամիսը նուիրել Ս. Սրտին:

Ո՞ւն է Ս. Սրտի առևն սիրեց, ծրադիր ու-  
ղութեաւ: — “Օր մը երբ Ս. Հաղորդու-  
թեան առջեւ կ'աղօթէի, կ'ըսէ Երանելին,  
իմ Տէրս այդպէս խօսեցաւ. “Չես կրնար  
ինձի աւելի մեծ սէր հատուցանել, բայց  
եթէ կատարելով այն բանն, զոր այնշափ  
անդամ քեզմէ խնդրեցի: Մարդկան ցուցած  
սիրոյս փոխարէն՝ աննոց մեծապայն մասէն  
ապէրախտութիւն միայն կ'ընդունիմ, որով-  
հետեւ այս սիրոյ Խորհրդան մէջ ինձի հետ  
պալութեամբ եւ արհամարհանօք կը վա-  
րուին: Այս պատճառաւ քեզմէ կը խնդրեմ,  
որ Տօն Մարմնոյ եւ Արեան ութօրէքին յա-  
ջորդով ուրբաթ<sup>1</sup> օրն՝ առանձին տօն մը  
հաստատուի ի պատիւ իմ Սրտիս:

“Սոյն օրւան մէջ մարդիկ Սիրոս պատուեն՝  
Հաղորդուելով ի քաւութիւն եւ ի հատու-  
ցումն այն թշնամանաց եւ արհամարհանաց,  
որոնք խորաններու վրայ ի բազմոցի դրուած-  
ամենասուրբ Հաղորդութեան դէմ եղած են  
եւ կ'ըլլան:

“Կը խօստանամ քեզմէ, որ Սիրոս պիտի  
ընդարձակի իւր աստուածային սիրոյն աղդե-

յութիւններն առատութեամբ չնորհելու  
անոնց, որոնք այս հատուցումն ու քաւու-  
թիւնը կը կատարեն, եւ առ այն կը յար-  
դուեն ուրիշներն ալ”:

Հոգուց հոգիներն ի՞նչ եւ անակառ պէտք էն  
այս առևն խճել: — Տօնելու են այնպէս,  
ինչպէս որ կը տօնուին Եկեղեցւոյ ամենէն  
հանդիսական օրերը. բայց մասնաւորապէս  
փառաւոր հանդիսութեամբ մեծարելով  
զուորբ Խորհուրդն Գոհութեան. “որովհե-  
տեւ, կ'ըսէ Երանելին, Ս. Սիրոտ մեծարուիլ  
կ'ուզէ գերազանց կերպով ի սուրբ Հաղոր-  
դութեան”:

Բովանդակ աշխարհի Եկեղեցիները կը  
հրաւիրուին Ս. Հաղորդութիւնն ի բազմոցի  
գնել, ոչ միայն ամբողջ տօնի օրն, այլ եթէ  
չնար Ե՛ ամբողջ նախընթաց գիշերն ալ,  
միաւորելով զայն Մոնմարթրի տաճարին մէջ  
կատարուած մշտնչնաւոց եւ տիկնիքական  
երկրպագութեան (Adoration perpétuelle et  
universelle) հետ: Երանի թէ նոյն օրն հա-  
մօրէն աշխարհը Գոհութեան Խորհրդոյն մէջ  
Յիսուսի Սրտին երկրպագութիւն ընէր: Ա՛հ,  
ինչ վաեմ տեսարան, եւ քանիօն միփթա-  
րութիւնպիտիրըլար աստուածային Ս. Սրտին:

Հոգուագացեալ է՞նչու պէտք էն այս առևն  
խճել: — “Ասոր տօնախմբութիւնն սկսելու

<sup>1</sup> Լուսաւորչաց Բարեկենդանէն երկու օր յառաջ:

Ենք նախօնիթաց իրիկուրնէ, կ'ըսէ Հայոն Գրուազէ: Խոտովանանքի մէջ պէտք է ներուանինդրել մանաւանդ Ա. Հաղորդութեան գէմ եղած արհամարհանաց համար. եւ հաղորդուելու ենք՝ հաղորդութեանց մէջ եղած պակասութեանց հատուցում ընելու դիտամբ: Սյոյն օրն սովորականէն աւելի երկայն ժամանակ պէտք ենք անցընել Ա. Հաղորդութեան առջեւ: Եթէ հնար է, հինգ անգամ այցելութիւն ընելու ենք Ա. Խորհրդոյն, հետեւեալդիտաւորութեամբ. 1. Հաղորդութեան սուրբ Խորհրդոյն հաստատութեանը շնորհակալ ըլլալու համար. 2. Իբրեւ ներգործութիւն գոհութեան քանի անդամոր բնդունեցանք զինքն ի Ա. Խորհրդեան, եւ ուրիշ մեզի ըրած անթիւ շնորհայր համար. 3. Անհաւատներէն եւ հերետիկուներէն իբրեւ եղած արհամարհանաց փոխարէն պատուելու համար. 4. Մեր կողմանէ ըստ կարելոյն մեծագոյն մեծարանք ընելով՝ նոյն խոկ ուղղափառ հաւատացելոց կողմանէ եղած անարդանաց, ամպարշառութեանց եւ սրբապղծութեանց հատուցում ընելու համար. 5. Զիսուս Քրիստոս յատկապէս այն ամէն եկեղեցեաց մէջ մոքով պաշտելու դիտաւորութեամբ, ուր առաջանակի մէջ գրեթէ ամէնէն մոռացեալ եւ լքեալ կը կենոյ:

Սյոյն օրն կարելի եղածին չափ մտամիտով ըլլալու ենք, եւ ստէկ սլացական աղօթք-ներով, մահացուցմամբ եւ բարեգործութեամբ Յիսուսի Արտին հետ միանալու ենք:

## Է.

Ա. Արտին ամիսն ու խորանները:

Ա. Արտին ամիսն Էլբ հասուառութցու: — Յունիս ամիսն Ա. Արտին նուիրելու սովորութիւնն սկսաւ Փարիզ 1833ին, Ռւազօներու վանքին մէջ՝ Քէլէն արքեպիսկոպոսին հաւանութեամբ: — Յամի 1899 Յուլիս 21ին Արարողութեանց Ա. Ժողովը յանուն Լեւոն Ժ.Գ. ի առ ամենայն եպիսկոպոսուն թուղթմուղեց՝ որուն մէջ կը կարգանք. “Ա. Քահանայապետը ջերմասպէս կը յանձնարարէ, որ ամբողջ Յունիս ամսուան մէջ՝ ի պատիւ Ա. Արտին հրապարակաւ զանազան ջերմեռանդութիւններ կատարելու սովորութիւնը պահուի: Այս բարեպաշտ գործոքաջալերելու դիտմամբ 300 օրւաններողութիւն կը շնորհէ հաւատացելոց՝ քանի անդամ որ ներկայ գտնուին այս ջերմեռանդութեանց. գոնէ տասն անգամներկայ եղաղներուն կը շնորհէ լիակատար ներողութիւն:”

Հոգաց հովիւներ էն ու պէտք էն ընել: —  
Սրբազն Քահանայապէտն որոշ կերպավ  
ընելիքնին նշանակած է. ջերմապէս կը յան-  
ձնարարէ (commendat quam maxime)  
անոնց, որ ամէն եկեղեցիներու մէջ ի պա-  
տիւ Ա. Սրտին հրապարակաւ. ջերմեռանդու-  
թիւններ կատարեն, եւ Եթէ կարելի է՝ ամէն  
օր: Այսու ակնարկել կ'ուզէ, որ Եթէ ամէն  
օր ժողովուիլը մեծ դժուարութիւն պատ-  
ճառէ, կրնան ամսոյն մէջ տասն անդամով  
դոհ ըլլալ. զոր օրինակ, այն օրն երբ ջերմե-  
ռանդութիւնը կը սկսի, շարժուն մէջ երկու  
անգամ՝ կիրակի եւ ուրբաթ օրերը, եւ ջեր-  
մեռանդութեան վերջին օրն:

Այս ջերմեռանդութեանց համար պէտք  
է. 1. Ա. Սրտի խորան մը վայելուչ զարդա-  
րեալ, ինչպէս որ Մարեմայ ամսոյն մէջ կ'ըլ-  
լայ. 2. Հոգեւոր երգեր. 3. Ա. Սրտին վրայ  
ընթերցուած կամ իրատ մը. 4. Զանազան  
աղօթքներ, գոնէ Յիսուսի Սրտին Լիթա-  
նիան եւ Կուիրման աղօթքը. 5. Եթէ կա-  
րելի է՝ նսեւ Օրհնութիւն:

Հաստիւցեալ էն ու պէտք էն ընել: —  
1. Պէտք են իրենց հօվիւներուն օգնել՝  
Ա. Սրտին խորանը զարդարելու համար նուեր  
ընելով մամ, ծաղկի եւն. 2. Կանոնաւորա-  
պէս ներկայ դտնուիլ հրապարակական ջեր-

մեռանդութեանց, եւ Եթէ արգելք մ'ու-  
նենան՝ առանձին կատարել նյոյնպիսի ջեր-  
մեռանդութիւններ. 3. Եթէ կարելի է՝  
տաւնն ի պատիւ Ա. Սրտին պղտիկ խորան  
մ'ունենալ. 4. Յունիս ամսոյն ամէն մէկ օրն  
այս աստուածային Սրտին պատույն նուիրել,  
զանազան բարեպաշտական գործեր, մա-  
նաւանդ՝ ստէպ ստէպ սլացական աղօթքներ  
ընել:

Է.

Օր Ա. Սրտին կամ առաջին որ-  
պաթ իրարանչիւր ամսոյ:

Ո՞ր Հոգ Գետրէի համբելը նու առաջն  
ուրբաթն: — Յամի 1899 Յուլիսի 21ին առ-  
ելակալպատունս ուղղեալ թղթին մէջ կը  
կարդանք, թէ Կուրին Սրբութիւնն (Լեռն  
ՓԳ.) սաստիկ կը փափարի (magnopere in  
votis habet), որ ամէն տեղ տարածուի գե-  
ղեցիկ սովորութիւնն, եւ ըստ այնմ ամէն  
ամսոյ առաջին ուրբաթ օրն ի պատիւ  
Ա. Սրտին կատարուին ջերմեռանդական գոր-  
ծեր: Եթէ այս բարեպաշտական հրահանդս  
քրիստոնեայ ժողովրեան մէջ իրբեւ սովո-  
րութիւն մուտ գտնէ, անով ընդ միշտ կը  
հաստատուի այն թագաւորական եւ առ-

տուածային իրաւունքն, զոր Յիսուս Քրիս-  
տոս իւր երկնաւոր Հօրէն ընդունած էր բոլոր  
մարդկային ազգին վրայ :

Ուշնաւ եւ ուրբանի օրաւան էլեւուր բարեպահ-  
ուակն էրութէն : — Երանելի Մարգարիտա-  
Մարիամ կը յանձնէ ի մասնաւորի .

1. Պատիկ մտածական մը Ս. Արտին Տեր-  
մեռանդութեան վրայ, գոնէ քառորդ ժա-  
մու չափ :

2. Հաշոտարար հաղորդութիւն : Տէրն մեր օր  
Մ'րսաւ անոր. “Ամէն ամսոյ առաջին ուրբաթ-  
օրն հաղորդուէ, ամսոյն մէջ ի Ս. Խորհր-  
դեան ինծի դէմ եղած նախատանաց հա-  
տուցում ընելու համար : Եթոյ իրեն խոս-  
տում մ'րբաւ, որ մնծ խոստում կը կրչուի .  
“Անբաւ գթութեամբ կը խոստանամ քեզի,  
բաւ, որ Սրտիս ամենակարոշ սէրն ապաշ-  
խարութեան վախճանական նորհքը պիտի  
պարզեւէ այն ամէն անձանց, որոնք ինն  
ամիս ետեւէ ետեւ ամսոյն առաջին ուրբաթ-  
օրը կը հաղորդուին . այսպիսիք առանց ինծի  
հետ հաշտուելու եւ առանց Ս. Խորհրդ-  
ներն ընդունելու պիտի չմեռնին, վասն զի  
իմ աստուածային Սրտս այն վերջնն վայր-  
կենին ապահով ապաստանարան պիտի բլայ  
իրենց :

3. Պատարագ մատուցանել կամ տեսնել ի  
պատիւ Արտին Յիսուսի :

4. Ս. Հաղորդութեան այցելութիւն :

5. Յիշատակ շարչարանացն Քրիստոսի : “Օք  
մը, կը գրէ Երանելին, Տէրն մեր իւր փա-  
փաքն յայտնեց ինծի, որ ամէն ուրբաթ գամ  
իրեն ի խաչելութեան 33 Երկրպագութիւն  
ընեմ, ջանալով դնել ինք զինքս այն տրա-  
մադրութեան մէջ՝ յորում կը գտնուէր  
Ս. Կոյսը . եւ այս ամենայն միաւորելով իւր  
աստուածային Որդւոյն շարչարանաց հետ՝  
նուիրեմ երկնաւոր Հօր կարծրացեալ սրաե-  
րուն դարձին համար : Յիսուս մահուան ատեն  
օդնական պիտի բլայ անոնց, որոնք այս բա-  
րեպաշտ գործս կը կատարեն հաւատարմու-  
թեամբ : ”

6. Զանազան աղօթքների պատիւ Ս. Արտին,  
բայց մանաւանդ՝ Ակթանիան, Նուիրման  
աղօթքն, եւն :

7. Ի պատիւ Ս. Արտին ներքին եւ ար-  
տաքին մահացուցման եւ ապաշխարութեան  
գործեր : “Սէրս կը թագաւորէ ի վիշտս եւ  
ի նեղութիւնն”, ըստ Տէրն մեր Երանելոյն :

8. Ս. Արտին Յիսուսի ընել սաէպ ստէպ  
սլացական աղօթքներ սիրոյ եւ հատուցման :  
“Այս բարեպաշտ գործն կարելի է ընել ամէն  
աեղ եւ ամէն ժամանակ, կ'ըսէ Հայրն

Գրուաղէ, բաւական որ լռութիւնը սիրենք,  
ցրումներէն զգուշանդը եւ մեր անձն ամ  
փոփ պահէլու փոյթ տանինք”:

Յ.

*Ս. Սրտին նուիրեալ Եղբայրութիւններ:*

Ուղիւսօն համարում ունենալու են + Ս. Սրտին  
Եղբայրութեանց վրայ: — Եղբայրութեանց  
օգտակարութեան վրայ խօսիլ չեւ մաքերնիս,  
վասն զի ամեն մարդ կը ճանչնայ արդէն  
անոնց մեծամեծ օգուտաները: Իսկ Ս. Սրտին  
Եղբայրութեանց նկատմամբ բաւական է  
ըստին, թէ Տէրն մեր ինքնին զանոնք ինդրած  
էր եր. Մ. Մարիամէն. եւ Երանելին կը յաւելու: “Աստուածային Սիրան մեծապէս զոհ  
կ'ըլլայ, եթէ ջանանք Ս. Սրտին ջերմեռան-  
դութեան ընկերութիւն մը հաստատել:”  
Ըստ այսմ կը վայելէ որ Ս. Սրտին բարե-  
կամներն այսն ջերմեռանդութիւնը տարա-  
ծելու նպատակ ունեցող Եղբայրութիւն-  
ներէն մէկուն կամ միւսին գրուին. որբազան  
Քահանայապէտն Լեւոն ծգ. ալ յամի  
1899 Յուլիս 21ին Եպիսկոպոսաց գրած

թղթին մէջ նյն ջերմապէս կը յանձնա-  
րարէ:

Ս. Սրտին Էնդայրութիւններ կան: —  
Բազմաթիւ են այս Եղբայրութիւնք, որոնց  
գլխաւորներն են՝

1. Աւագ Եղբայրութիւն Հռովմայ (Archiconfrérie Romaine). Կենդրոնն է՝ Հռովմայ  
S. Maria della Pace եկեղեցին: Անդամ  
գրուողներուն պարտականութիւնն է, ամեն  
օր ըսել՝ հայր մար, Ողջոյն, Հաւատամք եւ Ռ' վ  
քաղցրազութ Սիրտ իմոյ Յիսուսի, տուր ինձ  
միշտ սիրել զքեզ աւելի: Չատ ներողութիւն-  
ներ չնորհուած են այս Աւագ Եղբայրու-  
թեան: Չատ տեղեր հաստատուած են այդ-  
պիսի Եղբայրութիւններ, որոնք կցուած են  
Աւագ Եղբայրութեանն եւ նոյն ներողու-  
թեանց մասնակից կ'ըլլան: Այդպէս է նաև  
ի Կ. Պոլիս Վեհեննական Միհթարեան Հարց  
“Անարատ Յղութիւն”, եկեղեցւոյն մէջ յա-  
մին 1873 հաստատուած Ս. Սրտին Եղբայ-  
րութիւնն, որ օրինաւորապէս կցեալ է Հռով-  
մայ Աւագ Եղբայրութեան:

2. Աւագ Եղբայրութիւն Ս. Սրտին Մոնմար-  
թրի (Archiconfrérie du Sacré Coeur de  
Montmartre), որուն կենդրոնն է՝ Փար-  
իս Մոնմարտր, rue de la Barre, 31: Եղբայ-  
րութիւնն հաստատուած է ի Ամսմարթր՝

Ս. Ալրտին հյակապ տաճարին մէջ. եւ նպատակն է Ս. Քահանայապետին ազատութիւնն եւ ընկերական կենաց բարողուումը: Բաղմաթիւ ներողութիւններ շնորհուած են Եղբայրութեանս անդամներուն: Կարելի է աշխարհքիս ամէն կողմն նոյն նպատակաւ Եղբայրութիւններ հաստատել օրինաւորապէս, եւ այս Աւագ Եղբայրութեան կցել տալով անոր ներողութեանցն մասնակից ըլլալ: Անդամք պարտական են ամէն օր ըսել՝ Հայր մաս, Ողջոյն, Հաւատամք եւ Սուրբ Սիրտ Յիսուսի, զիս բովանդակ քնզի կը նուիրեմ, պաշտպանէ Ս. Եկեղեցին իւր Թշնամիաց դէմ, սրբացուք մեր հայրենիքն եւ տուր որ զբեզ միշտ աւելի սիրեմ:

3. Ալօթքի Առաքելութիւն (Apostolat de la prière), որուն կենդրոնն է Գաղղիայի մէջ (Toulouse, Rue Darquier, 5): Այս Եղբայրութիւն շատ ընդարձակ եւ աշխարհքիս ամէն կողմ տարածուած է, եւ քսան միլիոնէն աւելի անդամ ունի: Անդամք քանի մ'աստիճանի կը բաժնուին, ըստ այնմ ալ պէսպէս պարտականութիւններ ունին: Այսինքն է, օրւան բոլոր գործերը Յիսուսի Սրտին նուիրել, կամ տուն մը վարդարան ըսել, կամ հաշտարար հաղորդութիւն (communion réparatrice) ընդունիլ եւ հայցել որ Ս. Ալրտին

թագաւորութիւնը գայ: Եղբայրութիւնս զանազան լեզուներով (գաղղիերէն, իտալերէն, անգլիերէն, գերմաներէն, սպաներէն, հունգարերէն, լեհերէն, յունարէն, ձենարէն եւն եւն) Սուրբանդապէ Սրտին Յիսուսի անունով ամսաթերթեր կը հրատարակէ աշխարհքիս ամէն կողմն, որոնք մեծապէս կ'օգնեն Ծերմեռանդութիւնս տարածելու, որոնց ընթերցուումը Ծերմապէս կը յանձնաբարենք Ս. Սրտին բարեկամներուն: գաղղիերէն լեզուաւն՝ (Messager du Coeur de Jésus) կը հրատարակուի Եղբայրութեան վերոյիշեալ կենդրոնն՝ ի թուլուզ: արտասահմանի համար տարեկան գինն է՝ 5 ֆր. 75: — Այս Եղբայրութիւնս ալ շատ ներողութիւններ ունի:

Այդունքուն կ'ընդունուի նիւնէրէն հէնուն հէջ մասու հուն ընէլու է: — Իւրաքանչիւր որ պէսոք է անունը գրել տալ կամ Աւագ Եղբայրութեան եւ կամ անոր կցեալ Եղբայրութեան մը արձանագրութեանց մատենին մէջ: Այն տեղերն ուր Եղբայրութիւն չկայ, կարելի է նամակով ինդրել որ անունն արձանագրուի: Այս Եղբայրութիւններս բնաւու վճարմունք չունին: Գրուզն չի մեզանչեր՝ եթէ պարտքերը չկատարէ, միայն թէ նոյն Եղբայրութեան ներողութիւններէն եւ շնորհներէն կը զրկուի:

Ու եւ եցէ ուել ճը այս Ա-ադ Եղբայրուն  
լունաց մէկուն հցեալ Եղբայրունիւն ճը հաս-  
տառապելու համար՝ ի՞ու ուշունակուն պայմաններ  
իւ պահանջուննեւն։ — Ժողովուսպեալ կամ  
հասարակութեան մեծը պէտք է 1. Եղբայ-  
րութեան կանոնադրութիւնը կազմակերպել  
ըստ կանոնաց այն Աւագ Եղբայրութեան,  
որուն անունն եւ էական հրահանգներն  
առնուլ կ'ուզէ։ 2. Իւր թեմին եպիսկոպո-  
սէն խնդրել կանոնադրութեան վաւերացումը  
(approbation), Եղբայրութեան օրինաւորա-  
պէս հաստատութիւնն (érection canonique)  
եւ վկայական թղթերն (lettres testimoniales),  
որոնցման եփսկոպուր կը վկայէ, թէ Եղ-  
բայրութիւնն հաստատուած է, եւ Աւագ  
Եղբայրութեան ընդհանուր վարչին կը յան-  
ձնարարէ անոր կցուիլն (agrégation). 3. Թէ  
վկայական թղթերն եւ թէ վաւերացեալ  
կանոնադրութեան մէկ օրինակն խսուրել ընդ-  
հանուր վարչին, խնդրելով իրմէ կցորդու-  
թեան վկայագիրն։ 4. Երբ այս վկայագիրս  
(diplôme d'agrégation) եւ ներողութեանց  
ցուցակն ընդունի, հարկ է որ թեմին եպիս-  
կոպոսին հաստատել տայ, եւ յետոյ Եղբայ-  
րութեան արձանագրութեանց մատեան մր  
բանայ։ Եղբայրութեան ամէն ներողութիւն-  
ները վաստկելու իրաւունքը կը ստանան ամէն

անդամք՝ որոնց անունն մատենին մէջ կ'ար-  
ձանագրուի։ 5. Եկեղեցւոյ մը մէջ Եղբայ-  
րութեան բարգաւաճումն ապահովելու հա-  
մար, անդամք պէտք են ամէն ամիս ժողվուիլ.  
Եւ մեծ խնամ տանելու է այդպիսի ժողովը-  
ներուն, որոնք ըստ կարելոյն հանդիսա-  
կան ըլլալու են. Եւ շատ փափաքելի է՝ որ  
վարիչն կամ ուրիշ քահանայ մը քարոզով  
կամ յորդորակով մ'անդամներուն եռանդն  
արծարծէ ու վառ պահէ։

Փ.

Ս. Սրտին ջերմեռանդութեան հետ  
միացեալ զանազան ջերմեռանդու-  
թիւններ։

Եկեղեցւոյ մէջ Ս. Սրտին ջերմեռանդու-  
թիւն վեցելու աւել հրճ է։ — Ս. Սրտին  
ջերմեռանդութիւնը վերջին գարերուս մէջ  
մեծապայծառ արեգական նման ըլլալու է,  
այնպէս որ ուրիշ ջերմեռանդութիւնք ըլլան  
իրմեւ արբանեակք։ Եւ միթէ այլազդ կա-  
րելի էր։ Որովհետեւ երկնի եւ երկրի բոլոր  
բարիեները կ'ընդունինք մարմացեալ բանին  
Սրտին առ մարդիկ սննեցած սիրոյն ձեռօք,  
կը հետեւի ուրեմն՝ թէ աստուածային ան-

Հուն սիրոյն ջերմեռանդութիւնը, — որուն պաշտօն կ'ընծայենք Յիսուսի մարմեղէն Սրտին կերպարանաց ներքեւ, — յիրաք ամենայն ջերմեռանդութեանց թագուհին է:

Զերմեռանդութեանց առելք կամ նուռազ արշանաւորութիւն առաջի կը լսուիք: — Զերմեռանդութիւն մ'ինչչափ որ աւելի սերտ կապ ունի Յիսուսի Սրտին սիրոյն հետ, նոյնչափ առաւել եւս յարդի եւ արժանաւոր է:

Եր. Մարտ. - Մարտամ մշղ ար ջերմեռանդութիւնները կը յայնաբարձե և առաջարկուապէս: — Հոս չենք խօսիր այն ջերմեռանդութեանց վրայ, որոնցմոլ Յիսուսի անձին, կենաց, չարչարանաց խորհուրդները կը մեծարենք, որովհետեւ ասոնք ամէնն ալ մեյ մէկ ճառագայթ են այն ջերմեռանդութեան, զոր կ'ընծայենք Յիսուսի սիրով վասեալ Ս. Սրտին: Ամէլ մեր խօսքն է՝ զանազան ջերմեռանդութեանց մասին, որոնցմոլ կը մեծարենք այն սուրբ անձերն որոնք առանձինն կերպով սիրելի էին Յիսուսի Սրտին, որովհետեւ իրենք ալ ջերմաջերմ սէր մ'ունէին առ այն սուրբ Սիրան: Ըստ այսմ, Եր. Մ. Մարիամ կը յանձնէ մեղի ի մասնաւորի սիրել ու մեծարել նախ:

Ս. Կոյս Մարիամ Աստուածածինն եւ անոր անարատ Սիրտը. եւ ապա՝

զԱ. Յովակէփ, Հրեշտակներն, Առաքեալ ներն եւ ի մասնաւորի Ս. Յովհաննէս առաքեալը, առաջին Աշակերտներն Քրիստոսի, եւ ամէնայն Սրբոց գունդն, որոնք Գողգոթայէն սկսեալ մասնաւոր պաշտօն մը մատուցին Յիսուսի տիգախոց Սրտին: Ասոնց մէջ ամէնէն երեւելիներն են՝ Ս. Գերտրուդա, Ս. Մաթիլդէ, Ս. Փրանկիսկոս Ասսիզի, Ս. Գլարա Ասսիզի, Ս. Եղիսարեթ, Ս. Ալուղիոս Գոնզակա, Ս. Փրանկիսկոս Սալէզ, Ս. Յովհաննա Շանթալ. — եւ առանձինն իմ եղանակաւ Քաւարանի հոգիները, որոնց համար ընծայուած պատարագ, աղօթք եւ այլ բարեգործութիւնք վերջին աստիճանի համելի են Յիսուսի Սրտին:

### ԺԱ.

Ս. Սրտին իոստումներն առ իւր քարեկամն:

Ուշնու էն այն խոստումներն զար Ս. Սէրոն ըբած է էր ծառայից եւ բոբեկամոց, — Այս խոստումներ մեծամեծ եւ թանկագին են. Հոս կը յիշենք ասոնց գլխաւորները:

1. Խոստացած է՝ որ օրհնէ այն ամէն տեղըն, ուր իւր պատկերը գրուած է եւ կը յարգուի:

2. Առատութեամբ կը սփուէ իւր շնորհք-ներն այն սրտերուն մէջ, որոնք Ս. Սրտի պատկերը կը յարգեն եւ կործքին վրայ կը կրեն:

3. Զմեղ անոր նուիրելն կու տայ մեզի զխաղաղութիւն սրտի. այս նուիրումն միանգամայն բանալի մըն է՝ որ կը բանայ մեզի Ս. Սիրտն եւ գրաւական է նախասահմանութեան:

4. Ս. Սրտին ջերմեռանդութիւնն ամէնէն զօրաւոր միջոցն է մեղաւորաց դարձին:

5. Այս ջերմեռանդութիւնս դաղղութեան դէմ գերագոյն դարման է:

6. Յիսուսի Սրտին ջերմեռանդութիւնը՝ կատարելութեան ամէնէն կարճ ճամբան է:

7. Աստուածային Սիրտը հոգւոց ծշմարիտ առաջնորդն է:

8. Ս. Սրտին ջերմեռանդութիւնն ամէնէն զօրաւոր միջոցն է, որով կը սորվենք սիրել զՏէրն մեր Յիսուս Քրիստոս:

9. Այս ջերմեռանդութիւնս կը դրումէ Յիսուսի Սրտին մէջ իւր պաշտօնատէր ծառայից անունները:

10. Յիսուսի Սիրտը կը միսիթարէ իւր ծառաներն թէ իրենց անձնական եւ թէ բնաւանեկան փորձանաց եւ տառապանաց մէջ:

11. Ի՞նք ծշմարիտ միսիթարիչ է հրա-

պարակաւ նախատեալ եւ թշնամանեալ անձանց:

12. Այն ընտանիքներն, որ ընտանեկան պաշտօն կը մատուցանեն իրեն, ամէն կարեւոր օգնութիւն կ'ընդունին իրենց վիճակին համար. այսինքն է՝ խաղաղութիւն, վշտաց մէջ միսիթարութիւն, գործոց մէջ զարգացնեան եւ օրհնութիւն իրենց ամէն ձեռնարթութիւն եւ օրհնութիւն իրենց ամէն ձեռնարթեանց:

13. Ս. Սրտին առանձինն եղանակաւնութեալ հասարակութեանց կամ միաբանութեանց համար պահուած են շնորհաց եւ փրկութեան գանձեր:

14. Աստուածային Սիրտն ամուր պատաստանարան է իւր ծառայից ի ժամու մահուան:

### ԺԲ.

Ս. Սրտին իսոստումներն առ իւր առաքեալս:

Ու՞նչն + էն Ս. Սրտին ջերմեռանդութիւնը առաջանց էլլուծ իսոստումներն: — Եր. Մարգ. Մարեմայ այս մասին ըսածներուն գլխաւորները կ'ամփոփենք հոս:

1. Ս. Սրտին առաքեալներուն անուններն՝

աստուածային Սրտին մէջ անջինջ կը գլուշ-  
մուին եւ յաւիտեան կը մնան:

2. Ամէն աստուածային գանձ առանց բա-  
ցառութեան բաց է Ա. Սրտին առաքեալնե-  
րուն առջեւ:

3. Ա. Սրտին առաքեալները կը վայելեն  
թէ աստուածային Սրտին բարութիւնն եւ  
թէ զպաշտպանութիւն Ա. Կուսին եւ ամե-  
նայն Սրբոց, մանաւանդ՝ Եր. Մարդ. Մա-  
րեմայ:

4. Այսպիսիք կատարելութեան մէջ արագ  
ու մեծ յառաջդիմութիւն կ'ընեն: Յիսուսի  
Սիրտն անձամբ կը սրբացընէ զանոնք եւ կը  
փառաւորէ:

5. Կ'ընդունին աստուածային զուտ սիրոյ  
շնորհքը:

6. Այսպիսիք իրենց հայրենեաց եւ ըն-  
տանեաց վրայ կը հրաւիրեն առատ օր հնու-  
թիւն:

7. Ա. Սրտին ջերմենանդութիւնը տարա-  
ծող՝ հոգւոց փրկութեան հակներուն պա-  
հուած են մեծամեծ օր հնութիւններ: Ասոնց՝  
մեղաւորաց դարձին համար տարած ջանքն՝  
առատ պառւղներով պիտի վարձատրուին:

8. Խաչն համբերութեամբ կրելու գաղտ-  
նիքն ու անոր յարդը կը ճանշնան, որով

տառապանաց մէջ զօրութիւն կը դգենուն  
եւ կը միսիթարուին:

9. Այսպիսիք կ'ընդունին վախճանական  
յարատեւութեան եւ Աստուծոյ սիրոյն մէջ  
սուրբ մահուամբ մեռնելու շնորհքը:

10. Վերջապէս, նոյն իսկ Ա. Սիրտը կ'ըլ-  
լայ իւր առաքելոց յաւիտենական վարձքն:

Սիրելի ընթերցող, այս ամէն շնորհքներն  
ու խոստումներն իմանալէդ ետեւ՝ կրնան  
անտարբեր մնալ Ա. Սրտին Յիսուսի, որ  
կրնայ գեեղ յաւիտեան երջանիկ ընել: Ու-  
րեմն բոլոր զօրութեամբդ պատուէ, մեծարէ  
եւ սիրէ աստուածային Սիրտը, Գրքոյկիս-  
քեղի տուած հրահանգաց համեմատ. բայց  
նաև ձեռքեդ եկածն ըրէ Ա. Սրտին առա-  
քեալ ըլլալու՝ Անոր նոր բարեկամներ  
դանելով եւ պաշտօնլ տարածելով, որպէս  
զի շուտով գայ Անոր թագաւորութիւնն.  
առ այս վախճան փնյթ տար որ Գրքոյկիս ծա-  
նօթացընեւամին ճանշուրներուդ: Կը մադ-  
թեմ որ աշխատութեանդ փոխարէն՝ Ա. Սիրտն  
ինքնին ըլլայ քու վարձք, զոր եռանդապին  
կը փափաքի իւր անձին համար ալ Գրքոյկիս  
թարգմանիչն:

## ՅԱԽԵԼՈՒԱԾՈ ԱՊՈԹԻՑ

Աղօթք նուիրմանն:

(Յէսուսի Սրբին Հէմ պատրիերին ոռչկու:)

Ո՛վ սիրելի Յիսուս, բազմապատիկ անհաւատարմութեանցս հասուցում ընկերութիւնամբ՝ երախտապարասրտիւ կը պարզեւեմ Քեղի սիրս, եւ կը նուիրեմ ինք զինքս բոլորովին Քեղի. եւ Քու շնորհօքդ կ'առաջարկեմ գբեղ մէյ մ'ալ չվշտացընել: (Օք Հէմ անհամ 100 օքուն Ները. — 2. Աքբուզ ամառ Շահունյան մէջ օք ճակատար ներդ. Էլի խոստավանի, հաղորդուել եւ Եիւլցուց դէպան: Պիռո է. 1807 Յունիս 9.):

Ամենօրեայ նուիրում (կամ՝ Բարի ղիտարութիւն) Ս. Սրտին Յիսուսի:

Տէր Յիսուս Քրիստոս, այն աստուածեղէն դիտաւորութեան հետ միացած՝ որով երկրիս վրայ անձամբ ամենասուրբ Սրտավդ դու-

լութիւններ մատուցիր Աստուածոյ, եւ դեռ հիմայ ալ անդադար Հաղորդութեան սուրբ Խորհրդոյն մէջ ամէն կողմ յաւիտեանս ժամանակաց կը մատուցանես, այս ամբողջ օրւանս մէջ՝ առանց ամենափոքր մասն ալ ի բաց առնելու, ըստնմանութեան միշտ անարատ կուսին Երանելոյն Մարիամու ամենասուրբ Սրտին՝ կը նուիրեմ Քեղի բոլորով սրտիւ բովանդակ դիտաւորութիւններս եւ խորհուրդներս, ամէն յօժարութիւններս եւ իղձերս, բոլոր խօսքերս ու գործքերս: (Օք Հէմ անհամ 100 օք. Ները. Լեւոն ԺԳ. 19 Դեկտ. 1885.)

Պաշտամանք առ Ս. Սիրտն Յիսուսի:

Աստուածային Սիրտ Յիսուսի, շնորհէ կ'աղջաշեմ, քաւարանի հոգւոց յաւիտենական հանդիստ, այսօր մեռնողներուն՝ վախճանական յարատեւութիւն, մեղաւորաց՝ ծշմարիս ապաշխարութիւն, հեթանոսաց՝ հաւատոյ լրյս, ինծի եւ բոլոր իմիններուն՝ Քու օրհնութիւնդ: Արդ՝ ամենապթած Սիրտ Յիսուսի, Քեղի կը յանձնեմ այս ամէն հոգինները, եւ առանց համար կը նուիրեմ Քեղի Քու բոլոր արդիւնքներդ՝ ի միութեան արդեանց երանեալ Մօրդ, ամենայն սրբոց եւ հրեշտակաց, եւ բոլոր այն սուրբ պատարագ-

ները, սուրբ Հաղորդութիւնները, աղօթքաներն ու բարի գործքերն՝ որ պյոր կ'ըլլան բովանդակ քրիստոնեայ աշխարհքի վրայ: (Օբ Հէ անդամ 100 օր Ներ. Լեռն ԺԳ. 13 Մարտ 1901):

Առաջին նուիրումն առ ամենասուրբ Սիրտ Յիսուսի (շարադրեալ ի Մարգ. Մարեմայ Ալազօվ):

Ես Ա. Ա. կը յանձնեմ եւ կը նուիրեմ Տեառն մերը Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ Սրտին իմ անձս, կեանքս, գործքերս, նեղութիւններս ու վշտերս, որպէս զի ասկէ ետքն զինքը պատուելու, սիրելու եւ փառաւորելու Համար միայն ապրիմ: Հաստատ կ'առաջադրեմ միանգամայն բոլորովին Յիսուսի Սրտին ըլլալ, ամէն բան իւր սիրոյն Համար ընել, եւ սրտանց Հրաժարիլ այն ամէն բանէ, որ այս աստուածային Սրտին կընայ անհաճոյ ըլլալ:

Անոր Համար, ո աստուածեղէն Սիրտ Յիսուսի, կ'ընտրեմ զբեղ սիրոյս միակ առարկան, կենացս պաշտպան, փրկութեանս ապաստանարան, տկարութեանս եւ յոզդողդութեանս նեցուկ, բովանդակ կենացս մէջ գործած յանցանքներուս քաւութիւն, եւ

մահուանս ժամանակ ամուր ապաւէն: Ա'ղէ, Սիրտ բարութեան, արդարացնուր զիս Հօր Աստուծոյ առջևն եւ անցուր ինձմէ իւր արդար բարկութեան պատիժները: Ո՛վ Սիրտ սիրոյ, բոլոր վաստահութիւնս քու վրադ գրած եմ, վասն զի իմ տկարութենէս եւ չարութենէս ամէն բան կը վախնամ, բայց եւ քու անհուն բարութենէդ ամէն բան կը յուսամ:

Արդ ջնջէ վերցնուր ինձմէ ինչ որ քեզի անհաճոյ եւ կամացդ ընդդէմ է: Սուրբ սէրդ այնպէս խորունկ տպաւորուի սրտիս մէջ, որ դբեղ բնաւ չմոռնամ եւ քեզմէ երբեք չըսածնուիմ: Կը ինդըեմ քու անսահման բարութենէդ, ամենասուրբ Սիրտ Յիսուսի, որ իմ անունս քու վրադ միշտ գրոշմուած մնայ, վասն զի կ'ուզեմ, որ իմ բոլոր երջանկութիւնս ու փառքս ըլլայ՝ քու ծառայութեանդ մէջ ապրիլ ու մեռնիլ: (Օբ Հէ անդամ 300 օր Ներ. Լեռն ԺԳ. 1 Յունիս 1897):

Այցելութիւն ամենասուրբ Հաղորդութեան (ի Ս.Ալփոնս. Լիկուորեայ):

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ առ մարդիկ ունեցած սիրոյդ Համար, լի գթութեամբ եւ սիրով գիշեր ցերեկ այս խորհրդայն մէջ կը կենաս՝ կը սպասես, կը Հրաւիրես եւ ամէն քեզի այցելութիւն ընսղները մարդասիրու-

թեամբ կ'ընդունիս, կը հաւատամ որ ամենասուրբ Հաղորդութեան մէջ ներկայ ես: Ի խորոց ոչնչութեան իմայ երկիր պագանեմ քեզ: Ծնորհակալ եմ ինծի ըրած ամէն շնորհացդ, մասնաւորաբար՝ այս Խորհրդոյն միջոցաւը զանձնի ինծի տալուդ, զամենասուրբ Մայրդ ինծի բարեխօս շնորհելուդ, եւ զիս այս եկեղեցոյս մէջ Քեզի այցելութիւն ընելու կոչելուդ համար: Եւ արդ, կ'ողջունեմ այսօր սիրալիր Սիրտդ, գիտելով ողջունել երեք նպատակաւ. Նախ՝ շնորհակալ ըլլալու համար այս ամենամեծ պարզեւիդ. Երկուրդ՝ հատուցում ընելու համար սյն Խորհրդոյն մէջ ամէն թշնամիներէդ կրած անարգանացդ. Երրորդ՝ այս այցելութեամբս միանգամայն երկրպագելու համար Քեզի այն ամէն տեղերն, ուր որ Դուռն խորհրդական ներկայութեամբդ կը գտնուիս եւ մարդկանէ բաւական մեծարանք չես ընդունիր եւ ամէնէն աւելի լքեալ թողեալ ես:

Բոլոր սրտանց կը սիրեմ զՔեզ, Յիսուս իմ. կը ցաւիմ մինչեւ հիմայ այնչափ անգամներ անսահման բարութիւնդ վշտացրնելուս: Կ'առաջադրեմ շնորհօքդ այսուհետեւ այլ եւս դՔեզ չշշտացրնել: Եւ հիմայ՝ թէեւ խեղճ եւ տառապեալ եմ, բովանդակ անձս Քեզի կը նուիրեմ եւ կը յանձնեմ: Կը հրա-

ժարիմ բոլորովին իմ կամքէս, բաղձանկներէս, յօժարութիւններէս եւ ամէն ունեցածէս եւ Քեզի կու տամ բովանդակ: Այսուհետեւ ըստ ինծի եւ ամէն ունեցածիս հետ ինչ որ կ'ուզես եւ ինչպէս որ կը համար: Քու սուրբ սիրոյդ միայն կը փափաքիմ, ասի միայն՝ ինչպէսնաեւ վախճանական յարատեւութիւն եւ Քու սուրբ կամացդ լիւուի կատարումը կը ինդըբեմ Քեզմէ: Քեզի կը յանձնեմ քաւարանի հոգիները, յատկապէս զանոնք՝ որոնք ամենասուրբ Հաղորդութեան եւ Մարեմայ Ա. Աստուածածնի առանձինն ջերմեռանդութիւն ունէին, Քեզի կը յանձնեմ նմանապէս ամէն խեղճ եւ ողորմելի մեղաւորները: Վերջապէս բոլոր իղձերս կը միաւորեմ, Փրկիչ իմ սիրելի, Քու սիրալիր Սրտիդ ըղձից հետ, եւ այսպէս միաւորեալ: Կը նուիրեմ յաւիտենական Հօրդ, եւ կ'աղաջեմ յանուն Քո՞ որ Քեզի ունեցած սիրոյն համար ընդունի եւ կատարէ: (1. Այս ուղիւր Ա. Հայուրդունեան ուղիւր կատարողին՝ ամէն անդամուն 300 օրուան ներողութիւն շնորհուած է: — 2. Այժմող ամէն ուղ կատարողին, այն ամուսնուն մէջ որ է՝ օր ու իրայց լիակատար ներողութիւն վաստիւլ՝ ենթ իստորդանէ, հաղորդուած է՝ եկեղեցու դէմուն ուղիւր: Պիսու թա. 7 Սեպ. 1854):

Հոգեւորապէս հաղորդուելու եղանակ  
(ի Ս. Ալփոնս. Լիկուորեայ):

Յիսուս իմ, կը հաւատամ որ գուն ամեն անառարք Հազօրդութեան մէջ ներկայ ես:  
Ամէն բանէ վեր կը սիրեմ զբեղ, եւ հոգիս  
առ Քեզ կը տենչայ: Բայց որովհետեւ հիմայ զբեղ սուրբ Խորհրդոյս մէջ ընդունելու  
անկարող եմ, գոնէ հոգեւորապէս սիրոս  
եկար: Կը դրկեմ զբեղ, իբրև թէ ճշմար-  
տապէս իմ սիրոս եկած ըլլայիր, եւ բոլորո-  
վին կը միաւորիմ Քեզի հետ. ո՛չ, թող մի  
տար՝ որ այսուհետեւ երբեք Քեզմէ բաժ-  
նուիմ: Յիսուս, գերադշն բարիբ եւ քաղցր  
սէր իմ, վիրաւորէ եւ բորբոքէ իմ սիրոս,  
որպէս զի միշտ եւ մի միայն Քեզի համար  
վառի: (60 օրուն Ներուշ-նիւն. Լեռն Ժ. Գ.  
30 Յունիս 1893):

Լիթանիա Ս. Սրտին Յիսուսի:

Տէր ողորմեաց:

Քրիստոս ողորմեաց:

Տէր ողորմեաց:

Քրիստոս լուր մեզ:

Քրիստոս անսա մեզ:

Հայր երկնաւոր Աստուած, ողորմեաց մեզ:

Որդի Փրկիչ աշխարհի Աստուած, ողորմեաց  
մեզ:

Հոգիդ սուրբ Աստուած, ողորմեաց մեզ:  
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած, ողոր-  
մեաց մեզ:

1. Սիրտ Յիսուսի, Որդւոյ Հօր Աս-  
տուծոյ,
2. Սիրտ Յիսուսի, որ Հոգւովն սրբով  
կերպարանեցար յարգանդի Կու-  
մին Մարեմայ,
3. Սիրտ Յիսուսի, միաւորեալ ընդ-  
էռութեան բանին Աստուծոյ,
4. Սիրտ Յիսուսի, անհուն մեծվայել-  
չութիւն,
5. Սիրտ Յիսուսի, սուրբ տաճար Աս-  
տուծոյ,
6. Սիրտ Յիսուսի, տապանակ բարձ-  
րելոյն,
7. Սիրտ Յիսուսի, տուն Տեառն եւ  
դուռն երկնից,
8. Սիրտ Յիսուսի, վառեալ հնոց  
ընկերսիրութեան,
9. Սիրտ Յիսուսի, խորան արդարու-  
թեան եւ սիրոյ,
10. Սիրտ Յիսուսի, լցեալ բարու-  
թեամբ եւ սիրով,

11. Սիրտ Յիսուսի, խորք ամենայն առաքինութեանց,
12. Սիրտ Յիսուսի, արժանի ամենայն գոլութեան,
13. Սիրտ Յիսուսի, թագաւոր եւ կենդրոն համօրէն սրտից,
14. Սիրտ Յիսուսի, յորում ծածկեալ կան ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան,
15. Սիրտ Յիսուսի, յորում բնակեաց ամենայն լուսնին Աստուածութեանն,
16. Սիրտ Յիսուսի, ընդ որ հաճեցաւ Հայր,
17. Սիրտ Յիսուսի, յորս ի լուսթենէն ընկալաք զամենայն
18. Սիրտ Յիսուսի, ցանկալին բլրոցն յաւիտենականաց.
19. Սիրտ Յիսուսի, համբերող եւ բազումնորմ,
20. Սիրտ Յիսուսի, առատաձեռն առ ամենեսին որ կարգան առ քեզ,
21. Սիրտ Յիսուսի, աղբիւր կենաց եւ սրբութեան,
22. Սիրտ Յիսուսի, քաւութիւն մեղաց մերոց,

Նոր նորութիւնն

23. Սիրտ Յիսուսի, զեղեալ նախատանօք,
24. Սիրտ Յիսուսի, բեկեալ վասն մերոց անօրէնութեանց,
25. Սիրտ Յիսուսի, հնազանդ մինչեւ ի մահ,
26. Սիրտ Յիսուսի, խոցեալ տիգաւ,
27. Սիրտ Յիսուսի, աղբիւր ամենայն միսիթարութեան,
28. Սիրտ Յիսուսի, կեանք եւ յառութիւն մեր,
29. Սիրտ Յիսուսի, խաղաղութիւն եւ հաշտութիւն մեր,
30. Սիրտ Յիսուսի, զահ մեղաւորաց,
31. Սիրտ Յիսուսի, փրկութիւն յաւացելոց ի քեզ,
32. Սիրտ Յիսուսի, յոյս ննջեցելոց ի մէր քո,
33. Սիրտ Յիսուսի, քաղցրութիւն ամենայն սրբոց,

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս աշխարհի, ինայեա ի մեղ Տէր.

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս աշխարհի, անսա մեղ Տէր.

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս աշխարհի, ողորմեաց մեղ:

Յիսուս հեղ եւ խոնարհ Արտիւ,  
Արա զսիրտ մեր ըստ քում Արտի:

Ա Ղ Օ Թ Ք

Ամենակալ յաւիտենական Աստուած,  
Հայեաց ի Սիրտ Որդւայ քոյ սիրելւայ, եւ ի  
գովութիւնս եւ հատուցմունա՝ զորս մատսյց  
քեղ ի կողմանէ մեղաւորաց, եւ այնոցիկ  
եւս որք ի ձեռն արժանեաց նորա զողորմու-  
թիւն քո հայցեն: Հաճեաց շնորհէլ նոյց  
թողութիւն յանուն Որդւայ քոյ Յիսուսի,  
որ կենդանի է եւ թագաւորէ ընդ քեղ եւ  
ընդ սրբոյ Հոգւոյն յամենայն յաւիտեանս,  
ամէն:

(Ս. Քահանայուղեան Լէռն Ժ. 1899 Ա-  
ռուիլ 2ին Լէռնանէային համար 300 օրուն նէրն.  
շնորհնո՞ւ է:)

Ա Ղ Օ Թ Ք

Բազմագութ Տէր մեր Յիսուս Քրիստոս,  
որ նորանշան մարդասիրութեամբ քով բա-  
ցեր զանապառ գանձաւ աստուածեղէն Սրտի  
քոյ առաջի սրբոյ Եկեղեցւայ, տուր մեղ ա-  
ղաշեմք՝ զի սիրեսցուք քեղ յամենայն սրտէ,  
եւ հատուցուք քեղ փոխարէնս ընդ ամենայն  
արհամարհանաց, զորս կրեաց եւ կրէ հանա-  
պազօր Սիրտ քո վշտագին յապաշնորհ մարդ-

կանէ: Որ կենդանի ես եւ թագաւորես ընդ-  
Հօր եւ սրբոյ Հոգւոյն յաւիտեանս. ամէն:

Աղօթք ամէն ամսոյ առաջին ուրբաթ  
կամ կիրակի օրւան համար:

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, ահաւ-  
ասիկ քու առջեւել ծունդ դրած՝ կը նուիրենք  
քեղի Ա. Կոյս Մարեմայ անարատ Սրտին,  
հրեշտակաց, երկնից սրբոց եւ սուրբ Եկե-  
ղեցւայ ամէն երկրպագութիւնները, գովու-  
թիւններն ու փառատրութիւնները. եւ կը  
փափաքինք որ ամէն արարածք քեղի երկրո-  
պագութիւննեն, զեղ գովեն եւ փառաւու-  
րեն յաւիտեան: Այսնպէս շնորհակալ կ'ըլ-  
լանք այն ամէն բնութեան, շնորհաց եւ փա-  
ռաց երախտիքներուն համար, որոնք քեղին՝  
ամէն բարեաց անսպառ աղքերէդ՝ անպակաս  
կը բղիւն: Բոլոր զեղ սիրող արարածնե-  
րուն հետ մէկտեղ քեղի կ'աղաշենք, որ թու-  
զութիւն շնորհես այն ամէն անհաւատու-  
թեան, ապերախտութեան, ցրտութեան,  
անտարբերութեան, անպատուութեանց եւ  
թշնամանաց՝ որոնք կ'ըլլան քեղի մարդկան  
կողմանէ, մանաւանդ՝ յամենասուրբ Հաղոր-  
դութեան: Մարդասիրութեամբդ այս ամէ-  
նուն փոխարէն ընդունէ մեր հաւատքը,

վասահութիւնն ու մէրն եւ գթութեամբ լսէ  
մեր աղաշանացը:

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, ողորմէ  
Քու սուրբ Եկեղեցւոյդ, ամէն հոգեւոր եւ  
աշխարհական իշխանութեանց եւ ամէն  
հաւատացելոց:

— Լսէ մեղի, Տէր, կ'աղաչենք:

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, ողորմէ  
ամէն անդամոց Եղբայրութեանս, որ զբեղ  
փառաւորելու նուիրուած է:

— Լսէ մեղի, Տէր, կ'աղաչենք,

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, Քեղի  
կը յանձնենք մեր առանձինն իղձերն ու պա-  
տասանքները:

— Լսէ մեղի, Տէր, կ'աղաչենք:

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, ողորմէ  
քաւարանի հոգիներուն, մանաւանդ անոնց՝  
որմնք ի կենդանութեան Եղբայրութեանս  
անդամ էին:

— Լսէ մեղի, Տէր, կ'աղաչենք :

### Ա Դ Յ Թ Փ

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, Գուն  
քու անձդ խաչին վրայ երինաւ որ Հօր պա-  
տարագեցիր մարդկան փրկութեանը համար,  
եւ ամէն որ անթիւ անհամար անդամներ նոյն

պատարագը կը նորոգես մեր խորաններուն  
վրայ . տուր, որ Քու անհուն սիրոյդ այս զրհն  
ամէնուն օգուտ ընէ:

Պահէ, պաշտպանէ եւ կառավարէ Քու  
սուրբ Եկեղեցիդ եւ ասոր Գլուխն՝ զբահա-  
նայապետն մեր: Միաւորէ Քահանայապետին  
հետ եպիսկոպոսները, եպիսկոպոսաց հետ  
քահանաները, քահանայից հետ բոլոր  
հաւատացեալները . որպէս զի ամէնքս միա-  
սին՝ Գլուխն անկեան ի Յիսուս Քրիստոս  
հիմունելով, եւ առաքելոց հիման եւ վիմին  
Պետրոսի վրայ հաստատուելով՝ մէկ շնչք  
կազմենք: Քու սուրբ Եկեղեցիէդ հեռու  
պահէ ամէն սուտ վարդապետութիւն, հեր-  
ձուած, գայթակղութիւն, հալածանք եւ  
անտարբերութիւն:

Պահանէ ամէն պետերն, իշխանութիւն-  
ներն եւ առաջնորդները, որպէս զի Քու ի-  
մաստութեամբդ լուսաւորեալ եւ զօրու-  
թեամբդ ճոխացեալ՝ խաղաղութեամբ, միա-  
բանութեամբ, արդարութեամբ, սիրով եւ  
ճշմարիտ աստուածպաշտութեամբ կարենան  
իրենց հպատակներն յաւիտենական փրկու-  
թեան եւ ժամանակաւոր յաջաղութեան ա-  
ռաջնորդել:

Ծնորհք տուր ծնողաց, որ իրենց զաւակ-  
ներն Քու վառացդ եւ անոնց հոգւոյն փրկու-

թեանը համար կրթեն, անոնց անմեղութեան եւ առաքինութեան փոյթ տանելով՝ Աստուծոյ որդիք եւ երիխոց ժառանգորդներ ընեն:

Զաւակներու ալ իրենց ծնողաց նկատմամբ չլութիւն, յարդութիւն, շնորհակալութիւն եւ սեր ազգէ, որպէս զի Քու աստուածային օրհնութիւնդ անոնց վրայ զեղուի առատապէս:

Ծառաներուն շնորհը տուր, որ ըլլան հաւատարիմ, իրենց պարագերը կատարելու մէջ ճիշդ, համբերող եւ խոնարհ:

Պահէ անմեղները, զօրացնը ապաշխարողները, գարձ տուր մեղաւորաց, խոնարհեցնուր Քու անուանդ թշնամիներն եւ տար զանոնք ի գաւիթ ոչխարաց քոց. Քու աստուածային անուանդ փառքն օր բաս օրէ աւելի տարածէ, որպէս զի ամէն մարդ ճշմարտութիւնը ճանչնայ եւ երջանիկ ըլլայ:

Քեզի կը յանձնենք, վերջապէս, բոլոր մարդիկ: Ողորմէ նաեւ հաւատացեալ ննջեցեալներուն, մանաւանդ՝ մեր ծնողաց, աղդականաց, բարեկամաց եւ բարերարաց եւ մոռցուած հոգիներուն, տուր որ արժանի բլանք անոնց հետ միասին զՔեզ տեսնելու եւ յաւիտեան երանելի ըլլալու. որուն համար կ'աղաշենք Քեզի, քաղցր Սիրտ Յիսուսի՝

Փրկչին մերոյ, որ կենդանի ես եւ թագաւորես ընդ Աստուծոյ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Ս Լ Ա Ց Ա Կ Ա Ն Ա Գ Ո Թ Ք Ն Ե Բ

1. Հայը յաւիտենական, Քեզի կը նուիրեմ Յիսուսի Քրիստոսի պատուական արիւնը, մեղաց քաւութեան եւ Ա. Եկեղեցւոյ պիտոյից համար: (100 օր. Ներկ. ամէն անդամուն. Պիոս Է. 22 Սեպ. 1817):

2. Յիսուս իմ, ողբրմութիւն: (100 օր. Ներկ. ամէն անդամուն: Պիոս թ. 24 Սեպ. 1846):

3. Յիսուս Աստուած իմ, ամէն բանէ վեր կը սիրեմ զՔեզ: (50 օր. Ներկ. ամէն անդամուն: Պիոս թ. 7 Մայ. 1854):

4. Ամենաքաղցր Յիսուս, մի ըլլար ինձի գատաւոր՝ այլ Փրկիչ: (50 օր. Ներկ. ամէն անդամուն: Պիոս թ. 11 Օգ. 1851):

5. Ո՛վ քաղցրագութ Սիրտ իմոյ Յիսուսի, — Տնուր ինձ միշտ սիրել զՔեզ աւելի: (1. Ամէն անդամուն 300 օր. Ներկ.: — 2. Ամէն օր ըստով ամուս անդամ ճը լիակատար ներողութիւն իւ ըստովէ, եթէ նոյն օրն իսպանականի, հաւարդութունէ, եկեղեցի Շայցելց-Անդան ընէ եւ եկեղեց-ոյ դիոսուն աղջիկ: Պիոս թ. 26 Նոյ. 1876):

6. Քաղցր Սիրտ Մարեմայ, լիր փրկութիւն  
իմ: (Ներկառութեան ճիշտ թէ - 5է պէս: Պիտո  
թ. 30 Սեպտ. 1852):

7. Փրկիչդ աշխարհի, ողորմեաց մեզ:  
(50 օր. Ներկ.: Լեւոն ԺԳ. 21 Փետր. 1891):

8. Յիսուս, որդի Դաւթի ողորմեաց ինձ:  
(100 օր. Ներկ.: Լեւոն ԺԳ. 27 Փետր. 1886):

9. Քաղցր Յիսուս, ամեր ինծի հաւատոյ,  
յուսոյ եւ սիրոյ աճում, զղջացեալ եւ խո-  
նարհ սիրտ: (100 օր. Ներկ.: Լեւոն ԺԳ.  
13 Սեպ. 1893):

10. Ամեն տեղ սիրուի ամենասուրբ Սիրտ  
Յիսուսի: (100 օր. Ներկ.: Պիտո թ. 23 Սեպ.  
1860):

11. Յիսուս հեղ եւ խոնարհ Սրտիւ, արա՛  
զսիրտ իմնամն քում Սրտիդ: (300 օր. Ներկ.:  
Պիտո թ. 25 Յունվ. 1868):

12. Քաղցր Սիրտ Յիսուսի, լիր սէր իմ:  
(300 օր. Ներկ.: Լեւոն ԺԳ. 21 Մայ. 1892):

13. Սրբուհի անարատ կոյս Մարիամ,  
Մայր Աստուծոյ եւ Մայր մեր, խօսէ մեզի  
համար Սրտին Յիսուսի, որ քու Որդիդ եւ  
մեր Եղայրն է: (100 օր. Ներկ.: Լեւոն ԺԳ.  
20 Գեկ. 1890):

14. Մարիամ, Մայր Աստուծոյ եւ Մայր  
ողորմութեան, աղօթէ մեզի եւ ննջեցելոց

Համար: (100 օր. Ներկ.: Լեւոն ԺԳ. 15 Գեկ.  
1883):

15. Ս. Յովետի, օրինակ եւ պաշտպան  
Յիսուսի Սիրտը պատուողներու, աղօթէ մեզի  
համար: (100 օր. Ներկ.: Լեւոն ԺԳ. 19 Մայ.  
1891):

ԾԱՆՈԹ: — 1. Գրույիւ մէջ յէլլուստր բո-  
լոր Ներկութիւնները առաջանել հագուստ աւ իս-  
րէլի և մէրժեցնել. — 2. Ուր որ եվէլլուստ-  
րայ քանակուածութիւնն ուժուման աղջնելու պայ-  
ման յէլլուստր է, 5 Հոյր մէր 5 Ուշայն ըստը  
բառական է:

## Ե Ր Գ

### ԱՌ ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

Երգենք մենք գարձեալ մեր երգն անփոփոխ...  
Լըսէ մեզ Յիսուս, մարդկութեան սիրող.  
ՍԻՐՏ սուրբ Յիսուսի՝ ակնազբիւր չնորհաց,  
Սիրալիր ՄՐՏԻԴ դուռը մեզի բաց:  
Թաղ որ ներս թռչնք ազատ անարդել,  
Ինչու որ սկսանք աշխարհնք անարդել,  
Ուրտեղ վիշտ հօգւոյ եւ պէսպէս վըտանդ,  
Իսկ խաղաղութիւն բընաւ չդըտանդ:

Անոր համար քաղցր եւ սիրուն Յիսուս,  
Ըղբեղ միայն Տէր կ'ընտրենք սրտերնուս.  
Վառէ ՍԻՐԻ սէրն անոնց մէջ անշէջ,  
Թէ մեր խնդութեան եւ թէ ցաւոց մէջ:  
ԱՀ այսուհետեւ ոչ մէկ արարած  
Կրնայ մարել սէրդ մեր ներոը վառած.  
Միայն մի բառնար շնորհքդ ամենեւին,  
Որ չըլանք դարձեալ ծառայ չար դեւին:

Աստուածեղէն ՍԻՐՏ, ահա բովանդակ  
Արտերնիս կու տանը Քեղի պատարագ.  
Փոխարէն տուր մեզ ՍԻՐՏԸԴԻ սիրալիր,  
Զոր մեղի ամուր ապաւէն բացիր:  
Օրհնեալ ըլլաս ՍԻՐՏ անբիծ եւ բարի,  
Բոյօր մարդկութիւնն սիրովը վառի.  
Հեղ ամենուս վրան Արիւնդ թանկադին,  
Եւ արժանացնուր երկնից պերճ թագին:

Եղբ ինծի ապաւէն միշտ,  
Երբ հանի վրաս ցաւ եւ վիշտ.  
Ի փորձութեանց զիս աղատէ,  
Որ դեւն Քեղմէ չղատէ:

Գահէդ նայէ աշքովէ գլթած.  
Յոր վերացցց զբեղ Աստուած.  
Աիրուն Որդիդ ինծի ցուցուր,  
Չբաժնէ զիս հուր կամ ջուր:

Ինքն է Փրկիչս, իսկ Դու միշտ Կոյս  
Պիտ' ըլլաս միշտ իմ քաղցր յօյսս.  
Արդ հասցնուր զիս երանութեան,  
Որ օրհնեմ զբեղ յաւիտեան:



## ՍԻ ԵՆԵՐԵՍ ՍԻՐՏ ՄԱՐԵՄԱՑ

ՍԻՐՏ Մարեմայ անբիծ շուշան,  
Դու ցնծութիւն մարդկութեան.  
Ամենուն ես քաղցր եւ սիրուն,  
Մանաւանդ կոյս սրտերուն:

Հրատարակությունը

Եղբայրութեան

Ամարատ Յղութեամ Ա. Կոսիմ:

1. Մէջէպէ գարշը սէօզէրէ ձէվապէր .  
Տէրվելեան Հ. Մանուէլ Վ. ին թէր-  
ճիմէսի. 1866: Թղթկղմ. 1.50, կիսլթ.  
1.75, կկշ. 2.50:
2. Թէօվակէքեար Մարիամ Մադդաղենա-  
ցինին կէճէլէրի. իթալիան լիսանընտան  
Կ. Վ. ին թէրճիմէսի. 1862: Թղթկղմ.  
1.—, կիսլթ. 1.25:
3. Հինն Աստուած. Գոնրատ Պոլանտէնի  
ժամանակակից վէպ. 1872: Թղթկղմ.  
—.35, կիսլթ. —.50:
- 3ա. Ալլահը գատիմ. Գոնրատ Պոլանտէնին  
ազիր հիքեայէսի. 1872: Թղթկղմ. —.50,  
կիսլթ. —.75, լթկղմ. —.90:
4. Յիսուս էֆէնտիմիլին միւպարէք եիւ-  
րէլինին եօրթուսունա տօգուզ կիւն-  
լիւք հազըրլըդ. Առաքելեան Կ. Վ. ին  
թէրճիմէսի. 1874: Թղթկղմ. 2.—,

- կիսլթ. 2.25, լթկղմ. 2.50, կկշ. 2.80,  
կշկղմ. 3.—, սոկեղ. 5.—:
5. Քրիսթիան թէփէքքիւրէրի. Տէրվե-  
լեան Հ. Մանուէլ Վ. ին թէրճիմէսի.  
1875: Թղթկղմ. —.75, կիսլթ. 1.—:
6. Ազօթք Պատրաստութեան եւ Գոհու-  
թեան սրբոյ պատարագի, վասն իւրա-  
քանչիւր աւուր շաբաթու. թարգմ. ի  
Հ. Թագէէ Վ. Թոռնեան. 1880:  
Թղթակաղմ. 1.—, կիսլթ. 1.25,  
լթկղմ. 1.50, կկշ 2.—:
7. Եւնի տուաքիթապը. 1839: Թղթկղմ.  
2.—, կիսլթ. 2.25, լթկղմ. 2.45, կկշ.  
2.90, կշկղմ. 4.50, կշկղմ. սոկ. 6.—:
8. Լէյալիի Օդոստինոս (Գէշեռք Ա. Օդոս-  
տինոսի): Էնդարէ եպիսկոպոս Առա-  
քելեան Կարապետ Վ. ին թէրճիմէսի.  
1881: Թղթկղմ. 2.—, կիսլթ. 2.30,  
լթկղմ. 2.60, կկշ 2.90:
9. Լուստ միւճիղաթլարը: Էնդարէ եպիս-  
կոպոսու Առաքելեան Կարապետ Վ. ին  
թէրճիմէսի. 1881: Թղթկղմ. 1.50,  
կիսլթ. 1.75, կկշ. 2.50:
10. Ազօթագիրք պաշտօնասիրաց սրբոյն  
Յովենիայ Աստուածահօր ի Հ. Պետոն-  
Վ. Յովենիանեան 1883: Թղթկղմ. 2.—,

- լթկղմ. 2.50, կշե 2.80, կշկղմ. 4.20,  
կշկղմ. սոկ. 4.50:
11. Գիքիր տուասընա միւթէալիդ հագդ  
մատուէլք թ. Ա. Տէրվիշեան Մանուէլ  
Ա. Ինթէրճմէսի 1884: Թղթկղմ. —.50,  
կիոլթ. —.75, լթկղմ. 1.—, կշե. 1.25:
  12. Տուա քիթապը աղեղ Պիքիրին վէ Ա.  
Յովեկին իպատէթկիւզարաքը իշին:  
Էնդարէ եպիսկոպոսու Առաքելեան Կա-  
րապետ Ա. Ինթէրճմէսի. 1884:  
Թղթակաղմ. 2.—, կիոլթ. 2.25,  
լթկղմ. 2.50, կշե. 2.85, կշկղմ. 4.50,  
կշկղմ. սոկ. 6.—:
  13. Մեկնութիւն (Համառօտ) նկարագրաց  
ճշմարիտ կրօնի, գրեալ ի ճէրափլ Կարդ.  
թրդմ. ի Հ. Սամուէլէ Վ. Գաթրճեան.  
1885: Թղթկղմ. —.50, կիոլթ. —.75:
  14. Մարկեղինոս կամ Եկեղեցի առ Կոս-  
տանդիանոսիւ, թրդմ. Հ. Ա. Ա. Ա-  
զերեան. 1886: Թղթկղմ. 1.—, կիոլթ.  
1.25:
  15. Քէօյտէ Մայիս այլ, եախօտ Կէլթարզ  
Մահի Մէրիէլ. 1888: Թղթկղմ. 1.—,  
կիոլթ. 1.25, լթկղմ. 1.50:
  16. Կմանութիւն Յիօնուսի Քրիստոսի. Թով-  
մաս Գեմքացի: Թրդմ. Հ. Թաղէոս Վ.  
Թոռնեան. 1894: Թղթկղմ. 3.50,

- կիոլթ. 3.75, լթկղմ. 4.—, կշե. 4.35,  
կշկղմ. սոկ. 5.20:
17. Հոգի կրօնաւորական, 1894: Թղթկղմ.  
1.50, կիոլթ. 1.75, լթկղմ. 2.—,  
կշե. 2.35, կշկղմ. սոկ. 3.20:
  18. Լաւրետեան Լիտանիայի վրայ Մտածա-  
կաններ: Թարգմ. Ստեփան Վ. Մել-  
քիսեղեկեան, Արքեպիսկոպոս Տինդիոյ  
(Հրժըլ. Եպկ. Կաբանյ), 1896: Թղթկղմ.  
3.—, կիոլթ. 3.25, լթկղմ. 3.50, կշե.  
4.—, կշկղմ. սոկ. 5.—:
  19. Մատենիկ Մարեմայ Դասերաց “Բարե-  
պաշտական Միութեանց”, ի Տ. Ալբ.  
Փաստէրի. Թրդմ. ի Հ. Սամուէլէ Մա-  
շուրեան 1898: Թղթկղմ. 1.50, կիոլթ.  
1.75, լթկղմ. 2.—, կշե. 2.50, կշկղմ.  
սոկ. 3.50:
  20. Ազգունք կրօնաւորական կենաց: Թրդմ.  
Հ. Ա. Վ. Աէֆէրշեան 1898: Թղթկղմ.  
1.—, կիոլթ. 1.25, լթկղմ. 1.50, կշե.  
2.—, կշկղմ. սոկ. 3.—:
  21. Ա. Ա. Լեգուուրեայ Աղօթք Գլխաւոր  
միջց երանութեան հասնելու: Գերմա-  
ներէնէ թրդմ. Հ. Գ. Փանչիկեան 1899:  
Թղթկղմ. 1.—, կիոլթ. 1.25, լթկղմ.  
1.50, կշե. 2.—, կշկղմ. սոկ. 3.—:
  22. Համառօտ Պատմութիւն Զարչարանաց

8. Տեսան մերսյ Յիսուսի Քրիստոսի ըստ  
կատարինեայ Էմիլիիք, Հանդերձ կար-  
ճառօա պատմութեամբ վարուց նոյն  
կուսին: Թղթկղմ. 2.—, կիսլթ. 2.50,  
լաթակաղմ 2.75:

23. Արբազան Տարի կամ Ընդհանրական  
Յորթեան հազար իննհարիւր ամին: —  
Հ. Բ. Պ. — Թղթկղմ. 0.25, կիսլթ.  
0.50:

24. Ժամացոյց չարչարանաց կամ մտածու-  
թիւնք եւ իդք վասն տանջանացն Յի-  
սուսի Քրիստոսի ի սուրբ Ալփոնզուէ  
Լեգորի: Թրգմ. Հ. Թագելոս Վ. Թառ-  
նեան, եղեալ Յաւելոււած մի. 1900:  
Թղթկղմ: 1.50, կիսլթ. 1.75, լթկղմ.  
2.—:

25. Խնորեայ պատրաստութիւնք Տօնից Ս.  
կուսին եւ Սրտին Յիսուսի Հանդերձ  
յաւելուածով աղօթից: Յօրինեալ եւ  
հաւաքեալ ի Հ. Յակովայ Վ. է. Քօ-  
սեան, 1901: Թղթակաղմ 1.—, կիսլթ.  
1.25, լթկղմ. 1.50, կշշ 2.—:

26. Թագաւորութիւն Սրտին Յիսուսի, 1902:  
Թղթակաղմ. —.50, կիսլթ. —.75:

2013



«Ազգային գրադարան

